ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2016 թ. դեկտեմբերի 16 **N 172-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՄԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀՐԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N337-Ա հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Նոր Ամանոս համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության 02-076-0027-0019 կադաստրային ծածկագրով 0.099 հա այլ գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը համայնքի ղեկավարի 06.10.2014 թվականի N10-Ա որոշմամբ՝ առանց մարզպետի համաձայնության, փոխվել է բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, որը այնուհետև աճուրդային կարգով օտարվել է:

Խախտվել են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N479 որոշման պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9} և54-րդ հոդվածներով՝ **ո ր ո շ ու մ ե մ.**

1. Նոր Ամանոս համայնքի ղեկավար Վահրամ Ավետիսյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ **հարյուր հիսուն հազար դրամ,** որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ 900005243119 հաշվեհամարին:

2. Սույն որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնել Նոր Ամանոս համայնքի ղեկավար Վահրամ Ավետիսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նոր Ամանոս համայնքի ղեկավար Վահրամ Ավետիսյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով՝ 30 օրվա ընթացքում:

Գ. ԳՅՈՋԱԼՅԱՆ